

կողմից: քանի որ երկու լեզուն ևս զրարարին են հետեւում, պէտք է ձգել այն «ամփոփէն» կամ տեղական բարբառային ձևերը, որոնք երկու լեզուի մէջ ևս չկան: Այս երկու պայմանը կատարելով՝ արեւմտեան լեզուն շատ կը մօտենայ արեւելեան լեզուին և ամեն մի արեւելեան ընթերցողի համար հեշտ հասկանալի կը լինի:

Այսքանով բաւականանալով՝ այլ ևս չենք մտնում գերանունների, բայերի ևն. տարբերութիւնների քննութեան մէջ:

Մ. Արեղեան.

Վիեննա.

— 2020000 —

ՀԱՄԱՌՈՏՈՒԹԻՒՆ

ԲԻԻԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅԱՐՆԵՐԻ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ.

ԱՅԽԱՏՈՒԹԻՒՆ Հ. ԳԵԼՃԵՐԻ.

(Շարունակութիւն) *

Յուսարինիանի, իւր կառավարութեան ըսկրդներում արձակած մի շարք հրովարտականքը ապացուցանում են, թէ ինչպիսի եռանդով ձգտում էր որ կայսերական հաւատը բոլոր հպատակներն ընդունեն: Հին հերձուածողների մնացորդները, որոնց մէջ Արիւմտաները իրենց հիմնարկութիւնների հարստութիւններով կառավարութեան ազահութիւնը շարժել էին, կրեք ամիս ժամանակ ստացան ընդունելու պետութեան կրօնը. այլպէս սպառնում էր աքսոր: Սամարիւնների վրայ էլ գործադրեցին կրօնափոխութեան այդ բռնի ձևը, բայց բոլոր ժողովուրդը ոտքի կանգնեց և մի նոր կայսր հրատարակեց: Միայն արեան հեղեղների մէջ ընկճուեց ազատամբութիւնը: Երկիրը կործանուեց: Դրա հետ միասին սկսուեց կանոնաւոր ինկվիզիցիական դատաստան հեղեղական կրօնի բոլոր թէ ծածուկ և թէ յայտնի հետեւողների դէմ: Բայց հէնց բարձր դասակարգի և պաշտօնեաների միջից էին դրա բաղմամբիւ հետեւողները: Որոշուեց ստացուածների գրաւում և իրաւադրելութիւն քաղաքական պաշտօն ստա-

նալու: Բաւական թւով յարգուած պաշտօնեաներ ինքնասպանութիւն գործեցին: Հին կրօնի կենտրոնը Աթէնքն էր, և ներկայացուցիչները նոր պղատոնեան փիլիսոփայութեան ուսուցիչներն էին: Յուսարինիանը, որի համար ամենից առաջ կարեւոր էին հետհաւատ հաստատութիւնների հարուստ կալուածները, 529 թ. յարքուճիս զրաւեց պղատոնեան աւհարնմայի հիմնարկութեան կարողութիւնը, և այնտեղի համալսարանում արդեւեց փիլիսոփայութեան և իրաւագիտութեան ուսումը: Վերջին եօթ ուսուցիչները գաղթեցին Պարսկաստան: Հեթանոսական հոգեւորականութիւնը Փոքր-Ասիայում դեռ բաղմամբիւ կողմնակիցներ ունէր, մանաւանդ զիւղական ժողովրդի մէջ: Յովհաննէս Եփեսացին, Ասորի պատմաբանը, որը ինքն իրան անուանում է հեթանոսների առաջնորդ և կուռքերի կործանող, և միանգամայն զրաւած էր Յուսարինիանի վստահութիւնը, յետագայ տասնամեակներում մեծ չափով աշխատել է նոցա հաւատափոխութեան համար: Սա հպարտանում է թէ 70,000 մարդ է մկրտել:

Անհամեմատ ուրախալի պատկեր է ներկայացնում եկեղեցու զարդացումը արտաքին կողմից: Յուսարինիան իւր կրօնական-քաղաքական կառավարչական ծրագրի զլխաւոր նպատակն էր համարում, ինչպէս որ պետութեան մէջ հաստատեց հաւատի միութիւն, նմանապէս հեթանոսների մէջ տարածել քրիստոնէական կրօնը: Սա նոյն իսկ իւր քաղաքական կապերը այդ նպատակին էր ծառայեցնում, և իւր հաւատոյ առաքելաների համար ձեռք բերում հարեան զօրեղ իշխանների հովանաւորութիւնը: Ուստի Յուսարինիանի, ինչպէս նաեւ նրա անմիջական նախորդների ժամանակը, ներկայանում է միսիոնարական գործունէութեան ամենածաղկեալ զարգացման միջոց:

Քրիստոնէական քարոզչութիւնը միաժամանակ յաջող ընթացք ունէր Հելլուրների մէջ: Սինգիդունումի շրջակայքում, որ Սեծովի հիւսիսում ապրող հոնական ցեղ էր, և Նովկասեան ազգերի մէջ: Սոցա թագաւորները մկրտուելու համար գալիս էին մայրաքաղաք, ոոցա ընդունած կրօնին հետեւում

* Տես Արարատ 1897 թ. եր. 413:

էր ժողովուրդը: Այրիկայում Սահարայի օվաղիաներում տարածուեց քրիստոնէութիւնը: Եմենում քրիստոնէաների արիւնալից հալածանքը երբայական Դհու Նուվաս թագաւորից զրդուեց արեւելքի բոլոր քրիստոնէաներին: Եմենի յաղթական տիրապետութիւնը 526 թ. Արեւմտեայի Եթովպիական թագաւորի կողմից մեծ ուրախութիւն պատճառեց ամենքին և կայսերական հրամանով եգիպտական մի հոգեւորական կախկոպութիւն կոչուեալ ուղարկուեց հարաւային Արաբիա: Միսրոնարութեան մէջ աւելի գործունեայ էին մոնոփիզիկները: Մի Ասորի վարդապետ քարոզում էր Օրտէկիներին մէջ՝ որոնք հաւանականորէն հարաւային Հայաստանի մի քրդական ցեղ էին: Յուստինիանի ժամանակ սկսեց Յուստինը՝ Աղեքսանդրիայի մի կրօնաւոր: Նուրիայիներին դարձնել իսկ նրա սկսածը վերջացրեց նրա յաջորդ Լոնգինոս կախկոպութեան: Նորաստեղծ թագաւորը և ժողովուրդը ընդունեցին քրիստոնէութիւնը: Նմանապէս «Ալոգէի» մեծ ազգի» թագաւորը ընդունեց մկրտութիւնը: Այդպէս սկսած ամբողջ դարեր Յուստինիանի եկեղեցին սերտ կապուած մնաց Աղեքսանդրիայի մոնոփիզիկ պատրիարքութեան հետ:

Սակայն չնայած Յուստինիանի թագաւորութեան արտաքին փայլին՝ նրա ձգտումներին մեծութեանը, որ չէ կարելի ժխտել, այնու ամենայնիւ նա իւր մահուան ժամանակ (14 Մայիս, 565) թողեց տէրութիւնը միանգամայն խախտուած վիճակի մէջ: Նրա ոյժերից շատ բարձր էր արեւմուտքի տիրապետութիւնները պահպանել, դրա համար պակասում էին միջոցները: Եւ ինչ կարող էր օգնել հազիւ հազ զուլս բերած եկեղեցական միութիւնը, երբ Յոյների և Լատինների մէջ արդէն գոյութիւն ունէր ազգային առեւտրութիւնից ծագած խորը պառակտում: Ուստի կայսեր եկեղեցական քաղաքագիտական կարգադրութիւնները սխալների մի շղթայ են: զոյաշնորհիւ է իսկապէս սկիզբն առել և զարգացել Ասորիների ու Եգիպտացիների ազգային առանձնակի ձգտումները: Այն դարը իւր ամենափայտեղած մտքերը ծածկում էր եկեղեցականութեան քողի տակ: Մոնոփիզիկական ուսումը ծառայում էր

արեւելցիներին իրեն նոցա ազգային զգացմունքների խօսուել արտայայտութիւն: Իսկ դաստիճանաբար հեռանում էր հռովմէական կայսրութեան միութիւնից: Կայսրութեան արեւելեան նահանգների անջատումը, որ տեղի ունեցաւ Է-րդ դարում, իսկապէս ծրնունդ և սնունդ է առել Յուստինիանի եկեղեցական քաղաքականութեամբ: Ինչպէս որ արեւմուտքում նրա սկսած տիրապետական քաղաքականութիւնը, որով պետութեան ոյժերը արեւմուտքի վրայ ծախսեցին թուլացրեց կառավարութեան գործունէութիւնը արեւելքում:

Յուստինոս երկրորդը (565—578) Յուստինիանի եղբորորդին, որ նրանից զահաժառանգ էր նշանակուել, կարողացաւ շուտով մեծ եռանդով դահին տիրանալ, մանաւանդ իւր կին, փառասէր Սոփիայի և պալատի պահպանների առաջնորդ Տիրեքիոսի օգնութեամբ, մասամբ բռնութիւն գործ գնելով կայսերական տան դժգոհ իշխանների դէմ: Կայսեր յաջորդաբար կրկնուող խելացնորութիւնը, որ վերջը աւերական դարձաւ պատճառ եղաւ, որ 574 թ. Տիրեքիոսին որդեգրեց և կեսար հրատարակեց. սա էր այնուհետեւ Սոփիա կայսրուհու հետ միասին իրապէս վարում իշխանութիւնը և վերջն էլ (578—582) նրա յաջորդը դարձաւ:

Այդ կառավարութիւնները ներկայացնում են կարեւոր յեղաշրջան: Արդէն Յուստինիանի ժամանակ սկսել էր անհետանալ լատիններին և դադարել էր պետութեան պաշտօնական լեզու լինելուց. այժմեանից սկսած նրան քիչ քիչ դուրս է մղում յունարէնը: Այդ փոփոխութիւնը նկատուում են լատինաբարդեան և ասորական ժամանակագիրները, որ Մաւրիկիոսից սկսում են «յունական» կայսրների շարքը:

Ներքուստ Յուստինի խնայողութիւնը շատ օգնեց պետութեան տնտեսութեանը, թէև դրանով աճեց զօրագնդերի դժգոհութիւնը: Նրա հակառակը Տիրեքիոսի անմիա ռալլութիւնը նրան ժողովրդական դարձրեց, բայց իսկական պատճառ եղաւ կառավարութիւնների առաջ ծագած դժուարութիւններին: Եկեղեցական խնդիրներում երկու պետերն էլ անբամբասիր օրթոդոքս էին:

Նոցա աղետարեր զիջողութիւնը արքունիքի պատրիարքի առաջ, որին թոյլ էին տալիս նաև նպաստում էին մանտիւզիաներին օգնելու, պատճառ եղաւ որ արևելեան նահանգները վերջնականապէս օտարացան:

Արտաքուստ Յուստինիանի մահով առաջ եկած դահական փոփոխութիւնը արտայայտուեց կառավարութեան նախկին քաղաքականութեան կատարեալ փոփոխութեամբ: Պետութեան զիրքը տնհրաժեշտապէս պահանջում էր, որ կառավարութիւնը իւր զըլխաւոր ուշքը դարձնէր երկրի հիւսիսային և արևելեան սահմանները ապահովելու: Ուստի առաջին տեղն են բռնում Դանուբի հիւսիսում ապրող ժողովուրդների և Պարսիկների հետ ունեցած յարաբերութիւնները, դրա փոխարէն արևմուտքը յետին տեղն էր բռնում: Արևելքի տափաստաններում ծնունդ էր առել թուրքերի զօրեղ տէրութիւնը, Հռովմայեցիները շուտով նոցա Սաղանի հետ քաղաքական յարաբերութիւններ են սկսում: Աւելի ծանրակշիւ էր որ Յուստինիանի լծագաւորութեան վերջին տարիներում, Դանուբի հիւսիսային նահանգներում հանդէս եկան Ավարները: Մաճառական ստորին գաշտավայրերի արևելքում սլաւոնական ցեղերը ընկան նոցա ձեռքի տակ: Նոյնպէս շուտ և յաջող կերպով նոքա միջամտեցին գերմանական պետութիւնների՝ Լանգոթարդների և Պանոնիայի Դեպիտների զօրծերին, որովհետև սոքա սաստիկ լծնամացել էին միմեանց: Երբ դրութիւնը այդպէս փոխուեց, հարկաւոր էր Հռովմի ամբողջ ուշադրութիւնը:

Կառավարութիւնը այդ վտանգաւոր լծը նամիների հանդէպ ցոյց տուեց կատարեալ և հաստատակամ քաղաքականութիւն. տարեկան տուրքերը, որ Յուստինիանը սովորաբար վճարում էր Ավարներին, նորա յաջորդը դադարեցրեց. քանի որ նոքա առժամանակ զրազուած էին Լանգոթարդների և Դեպիտների կատաղի կռիւներով, օգնեցին Լանգոթարդներին և 567 թ. նպաստեցին Դեպիտների կատարեալ կործանմանը, մինչդեռ Հռովմայեցիները վերջիններիս ոչ մի օգնութիւն չէին ցոյց տուել: Ավարները, որոնք Լանգոթարդների հեռանալուց յետոյ ժաճառական ստորին գաշտավայ-

րերի տիրապետողներն էին դարձել, ինչպէս նաև սլաւոնական բազմաթիւ ցեղերը, աւելի և աւելի էին սպառնում Դանուբի հարաւային նահանգներին: Այդտեղ Հռովմը ցոյց տուեց մեծ խելք և ընդհանրապէս կոխմղեց պատուով, սակայն չնայած որ Տիրերիոսը ինքն էր առաջնորդում, Հռովմայեցւոց զօրքը ծանր պարտութիւն կրեց: Սաղաղութիւնը գնեցին միայն հարկ վճարելով: Տիրերիոսի կառավարութեան ժամանակ 581 թ. կորցրին սահմանի նշանաւոր Սերմիում ամրոցը: Դրանով կնքուեց հիւսիսային նահանգների վիճակը:

Այժմ պարզ կերպով երևաց՝ թէ Յուստինիանի տիրապետական քաղաքականութիւնը ինչպէս բարձր է եղել պետութեան ոյժերից: Երբ 568 թ. Լանգոթարդները ներս խուժեցին Իտալիա—նոցա հրաւիրուիլը Նարսէսից վերջերում ստեղծուած առասպել է—, պետութիւնը միջոց չուներ անհրաժեշտ զօրքերով պաշտպանելու այդ նշանաւոր նահանգները: Մի քանի տարիների ընթացքում յաղթող աշխարհակալները տիրապետել էին հիւսիսային Իտալիան և Տուսկիան. Սպորենտիումի և Բենեվենտումի մէջ հրամայում էին լանգոթարդեան հերցոգներու Նմանապէս այն ամուր քաղաքները, որ առաջի յարձակման ժամանակ ընդդիմութիւն էին ցոյց տուել: Լանգոթարդների առաջ մէկը միւսի յետեւից բաց արին իրենց դռները՝ 572 թ. Տիկինումը, յետագայ սերունդների օրով Պատավիումը և Կրեմոնան: Հռովմէական տիրապետութիւնը շուտով սահմանափակուեց, չհաշուած հարաւային Իտալիան և Սիկիլիան, Ռավեննայով և նրա հարեան Լմիլիա և Պենտապոլիս քաղաքներով, յետոյ Հռովմի և Նեպոլիի նահանգներով: Դրա հետ մնացին լիգուրեան և վենետեան ծովափնայ քաղաքները: Այն գաշնադիրը որ ոչնչացրեց Բելիզարը, Հռովմայեցիներին աւելի բաժին կ'ընդունէր, և փոխանակ Լանգոթարդների՝ «անուանելու անարժան» և «գարշահոտ» ժողովրդին: Հարեան ունենալու, կուսնային Օստգոթների ասպետական արմիւ ցեղին: Ուստի յետագայ ժամանակները շարունակ տուժում էր այն սխալների համար, որ կատարուել էին և թոյլ էին տրուել:

և որոնցից բաղկացած է Զորդ դարու այդ Լուսավորչիկոս ժոհի աշխարհակալական քաղաքականութիւնը որ շատերի գործունէն էր շարժել:

Հռովմի գործունէութեան առաջն առնում էին միաժամանակ սկսուած Պարսից պատերազմները: Առիթը տուել էին Հայերը որոնք սաստիկ յուզուած Պարսիկների յանդուգն քայլից որ թոյլ էին տուել ատրուշան շինել Դուինում՝ նոցա զխաւոր հոգեւոր քաղաքում, 571 թ. ապստամբուել էին Պարսից դէմ: Եղեցից օգնութիւն էին խնդրել և գտել: Նոցա հետ միացան նոյնպէս Արաքսիները: Դրանով սկսեց այն պատերազմը որ երբեմն ընդհատուելով խաղաղութեան դաշնադրութիւններով, ամբողջ 20 տարի տևեց: Մինչդեռ Հռովմայեցիք անյաջող պաշարել էին Մծրիները Պարսիկները 573 թ. զբաւեցին նշանաւոր Դարան և ամբողջ Ասորիքը աւարի առան: Երբ Տիրերիոսը խնամակալութիւնը ձեռք ձգեց, զինադադար արաւ որ չէր տարածուած Հայաստանի վրայ: 575 թ. այդտեղից Խոսրովը արշաւեց մինչև Կապպադովկիա և կրակեց Սեբաստիա և Մելիտանէ: Բայց երբ երկու անգամ ջարդ կրեց Եռնաց աւելի զերազանց զինուորական ոյժից, Պարսից թագաւորը հազիւ կարողացաւ Սփրատի վրայով իրան ապաստել: Հայաստանը ընկաւ Հռովմայեցիների ձեռքը: Մինչ այդ 576 թ. նորից արտաքսուեցին և կոիւր գարձեալ շարունակուեց: Մաւրիկիոսը՝ կանանոցի հրամանատարը—comes excubitorum—կայսրից նշանակուեց արևելքի զօրաց հրամանատար, և մեծ յաջողութեամբ պատերազմի դաշար փոխեց Պարսից հողի վրայ: Խոսրովի մահը 579 թ. արդեւ եղաւ խաղաղութեան յաջող դաշն կապելուն, որի համար մի քանի անգամ հաղորդակցութեան մէջ էին մտել: Նրա որդի և յաջորդ պատերազմատէր Ումայի դէմ Տիրերիոսը ամենայն եռանդով շարունակեց պատերազմը: 581 թ. Հռովմայեցիները Կոնստանտինի մօտ մի փառաւոր յաղթութիւն տարան:

Մի տարի յետոյ (582—602), Մաւրիկիոսը (Մօրիկ) ինքը զահ բարձրացաւ. նա ամենից առաջ հասկացաւ ներքուստ խնայող

տնտեսական քաղաքականութեամբ պետութեան բաղմատեսակ պահանջներին բաւականութիւն տալ թէև հէնց դրանով պատճառեղաւ որ իրան չէին սիրում և դրան վերջ ի վերջոյ զոհ գնաց նորա գահը: Եկեղեցական խնդիրներում նա միանգամայն հետևում էր իւր նախորդների քաղաքականութեանը: Միայն մոնոփիւզիոնների հալածանքները սահմանափակեցին մայրաքաղաքի պատրիարք Եովհաննէս Պահեցողի զրգմամբ: Սա որ մի սուրբ ձգնաւոր էր ամենամաքուր կեանքով և համոզուած օրթոդոքս, ցոյց էր տալիս այնպիսի համբերողութիւն, որ անսովոր էր տեսնել թէ տեսականապէս այլ կերպ ուսուցանող ձգնաւորների կողմից և թէ այն ժամանակուայ բոլոր դաւանութեան պատրիարքների կողմից: Դրան հակառակ աւելի անխիղճ կերպով էր կառավարութիւնը դատ վարում Ասորիքի կարճեցեալ հեթանոսների դէմ: Մոլեռանդ մոնոփիւզիա ամբոխը դրանց թուիցն էր համարում նաև Անտիոքի տէրութեան եկեղեցու պատրիարքին: Բայց սա լաւ էր ճանաչում այդ մարդկանցը. և իւր հաւատի մաքրութիւնը ապացուցեց նրանով որ մի մեծ կրկէս շինեց, «Ստատանայի եկեղեցի» ինչպէս որ բարեպաշտները ողբալով կոչում էին: Աւելի նշանաւոր էր կոիւր Հին-Հռովմի հետ: Դրիգոր Ա պապը (590—604) հակառակ էր իւր նորհռովմէական պաշտօնակցի իրրև նորութիւն ընդունած տիտղոսին, որ տիեզերական պատրիարք էր կոչուում, թէև իրապէս անարդար կերպով որովհետև այդ տիտղոսը մի դարուց ի վեր գործածութեան մէջ էր և Հռովմը երբէք չէր հակառակել: Ուստի կառավարութիւնը և արևելքի պատրիարքները բոլորն էլ անցան մայրաքաղաքի եկեղեցու պետի կողմը, որ յաղթանակելով պահպանեց իւր տիտղոսները: Պապի գազուած դանդաւան կայսրը և Անտիոքի մեծայարգ Անատոս պատրիարքը բաւական արհամարհալից պատասխան տուին. ականերև է որ այդ բոլորը նոքա շնչին բանակալ էին համարում: Եւ Հռովմն էլ յետադալում այդ բանից յետ է կանգնել լռելեայն:

Պարսկական պատերազմը դեռ մի քանի տարի էլ շարունակեց փոփոխակի յաջողու-

Թեամբ: Հռովմէական մի շարք յաղթութիւններէից յետոյ, 589 թ. տեղի ունեցաւ նշաւաւոր Մարտիրոսագոլտի սառումը: Բայց այդ ժամանակ կատարուեց մի բոլորովին անըստասելի փոփոխութիւն: որ հարեան տերութեան վիճակը Հռովմայ պետի ձեռքը ձգեց: Բահրամ Զորին զօրավարի ապստամբութիւնը կորստի մասնեց Պարսից Թագաւորի կեանքն ու գահը. նրա որդի Խոսրով Բ իրրե փախստական եկաւ Հռովմէացիների մօտ: Մաւրիկիոսը միջամտեց նրա օգտին, և 591 թ. արշաւանքը միջոց տուաւ նրան իւր ժառանգական գահը բարձրանալու: Մաւրիկիոսը ինչքան յաջող էր իրրե զօրավար, այնքան վատ քաղաքագետ էր. նա բոլորովին չհասկացաւ հանգամանքների արտակարգ շնորհից օգտուել: Նոր հաստատուած խաղաղութեամբ յետ ստացան միայն Դարան և Մարտիրոսագոլտը. յետոյ Պարսից Թագաւորը Հռովմայիցիներին տուաւ Հայաստանի մեծագոյն մասը: Դրա փոխարէն նշանաւոր Մծրինը մնաց Պարսից ձեռին:

Նոր կառավարութիւնը արեւմտեքումն նմանապէս ցոյց տուեց ուժեղ քաղաքակաւութիւն: Նշանակութիւնից զուրկ չէ, որ Մաւրիկիոսի օրով է առաջին անգամ Էքսարխ տիտղոսը զործածական է դառնում Ռափնենայում և Կարթագոյում: Իտալիայում և Ափրիկայում, որոնք հաւասարապէս վտանգի ենթակայ էին Լանգոթարդներից և Մարիներից, կարգուած են էքսարխները՝ զինուորական նահանգապետների ընդարձակ իրաւունքներով: որոնք քիչ քիչ իրենց են ենթարկում նաև քաղաքական վարչութիւնը: Էքսարխութիւնների հաստատութիւնը կարելի է մի տեսակ առաջին գործողութիւն համարել թեմաների կազմակերպութեան և հաստատութեան, որ կեանքի մէջ մտաւ է զարում: Վերին Իտալիան նորից զբաւեղու համար Մաւրիկիոսը դաշն կապեց Փրանկների հետ: Սմարագդուս էքսարխը առանձին եռանդ էր արտայայտում: Սակայն ձեռք չբերեցին որ և է մնայուն յաջողութիւն. միայն Լոնգոթարդների յառաջնագոյութեան առաջը փակուեց:

Տէրութեան հիւսիսային սահմանը շա-

րունակ վտանգուած էր: Ավարներից խաղաղութիւնը գնեց էին մեծ հարկեր վճարելով. զոցա փոխարէն առաջիններից զօգուած, սկսեցին ներս խուժել սլաւոնական ցեղերը որ Ավարներին հպատակ էին: Ժամանակակից Ասորի գրողների վկայութեամբ Ավարները՝ և Սլաւները աւելի խորը հարաւ մտան: 581 թ. վերջիններս արշաւում են ոչ միայն Թրակիայ, այլ ամբողջ Խմբերով բնակութիւն են հաստատում Թեսալոնիկէի շրջակայքում, և գաղթում մինչև Պելոպոնիս՝ մտադրուած այնտեղ մնալու: Աւանդութիւն կայ, որը իրաւ է ոչ ստեղծուած է և անվստահելի, թէ այն ժամանակները Եպիդարոս-Լիմերայի Լակեդէմոնացի բնակիչները փախուստ տալով սլաւոնական հոսանքի առաջ, հաստատուել են մօտիկ ընկած Ժայռակղզու վրայ և հիմք դրել Էմպորիում Մոնեմբազիա քաղաքին: որ վերջում մեծ նշանակութիւն ստացաւ: Նւ իսկապէս դարուկէս անց ծովագնացները Կիւնուրիան անուանում են՝ «սլաւոնական աշխարհ»: Թէ սլաւոնական տարրը հելլենական նահանգներում ինչքան զօրեղ էր, ապացուցանում է այն, որ 623 թ. սլաւոնական մի նաւատորմից յարձակում է Կրետէի վրայ և աւարի առնում: Ընդհակառակը առասպելների շարքին պէտք է դասել Փօլմրէյերի ծայրայեղ և արկածախնդրական ենթադրութիւնը — և այդ վաղուց է յայտնի — իրր թէ Մաւրիկիոսի օրով զարհուրելի կերպով ոչնչնալը են իսկո՞՞հ հելլենական բոլոր ժողովուրդը (բացի մի քանի ծովաբերդերից) և Հելլասն ու Պելոպոնէսը սլաւոնացիներ: Թէև դրա հերքումը այսօրուայ Յոյները չեն կատարել, որոնք առաջնորդում են ոչ այնքան զիտնական, ինչքան ազգասիրական հիմունքներով: Հանձարեղ Փօլմրէյերի վայրագ զաւանջանքների հիմքը

1. Ավարներ Սլաւների վերաբերմամբ ներկայացնում են ազնուականների սակաւաթիւ մի դասակարգ: Ընդհանրապէս զարմանալի է, որ այց դարեւում քաղով անհամեմատ լինի Ուրալ-արայեան փոքր ցեղերը ստեղծողում են Փերմանցիներին և Սլաւներին, ուրեմն նոյն պէտք է ունենային զինուորական, քաղաքական և մասնոր ցեղազանցութիւն, քառական է յիշել Հոններին (զորական և զերմանական ուրիշ ցեղերի սիրողներ էին), Ավարներին և Բուլղարներին:

խելացի ուսումնասիրութեամբ խախտելու զխաւոր ծառայութիւնը պատկանում է գերմանացի Կ. Հոպփին: Թէև սա էլ միւս կողմից հակառակ ծայրայեղութեան է հասնում՝ ժըխտելով, թէ Մաւրիկիոսի ժամանակուայ սլաւոնական աւարառական արշաւանքները որ և է մնայուն հետք չեն թողել: և իւր աշխատութեան մէջ հաստատուն հիմքով չէ առաջնորդուել: Թէ այսօրուայ Յոյների շատ յայտնի մասը Յոյն դարձած Սլաւոններ են, ոչ մի կասկած չկայ: Յունաստանի համար բախտաւորութիւն էր այսպէս չափաւոր ձեով կատարուած ժողովրդական խառնուրդը, որովհետև հին ժողովուրդները որ ապրում են բացարձակ առանձնութեան մէջ, յետ են մնում և խեղճանում. բաւական է յիշել Խորայէլացիներին: Այդ վտանգից ազատուեց Յունաստանը Ե և Զ դարերում սլաւոնական արեան խառնուրդով: Այսպէս յետագայ սերունդների ժամանակ կատարելագոյն սլաւոնացան Բալկանեան թերակղզու հիւսիսային մասում: այսօրուայ սերը-կրօնական և բուլգարական լեզուների սահմանները: 583 թ. Սինդիզմում, Վիմինացիում և Դանուբի ուրիշ ամրոցներ բնիկն Ավարների և նոցա հզատակ Սլաւոնների ձեռքը: 587 թ. նոցա ենթարկուեցին Միւսիայի քաղաքները. Բատիարիայ Դորոստոն և ուրիշներ, մինչև Մաւրիկիոսուպոլիս: Հէմուսի հարաւային երկիրը մինչև Ագրիանուպոլիս փոփոխակի կողոպտում էին Ավարները և Սլաւոնները: Դրերի գրութիւնը բարեօրուեց միայն 591 թ., երբ Մաւրիկիոսը Պարսիկների հետ խաղաղութեան դաշն կապելուց յետոյ, հնարաւորութիւն ստացաւ իւր զէնքի ոյժը անհամեմատ մեծ չափով զործ դնել եւրոպական սահմանների պաշտպանութեան համար: Այդ պատճառով ըսկուեց կռիւր կրկնակի կատաղութեամբ: Ավարները պաշարեցին Թեսալոնիկէն և սպառնում էին նոյն իսկ մայրաքաղաքին: Բայց 593 թ. հռովմական Պրիսկոս ընտիր զօրավարը անցաւ Դանուբը և 601 թ. քանիցս անգամ նոցա հիմնովին յաղթեց, առաջ Վիմինացիումի մօտ, յետոյ հիւսիսային ամերով առաջ խաղաղով, Թեյսի մօտ՝ Դեպիների նախկին բնակավայրում: Հետեւեալ տարին էլ պատե-

րաղմ մղուեց շատ յաջող. բայց զօրագնդերը զոգաւած կայսեր անժամանակ և անտեղի խնայողութիւնից, յայտնի կերպով ապրտամբեցին, երբ 602 թ. պէտք է ձմերէին Դանուբի միւս կողմում: Զինուորների յուզումը բնորոշ է, որ նոցա զուխն էր անցել ստորին աստիճանի մի զինուոր, Փոկաս հարիւրապետը Մաւրիկիոսը փորձեց կրկնախմբերին՝ կապոյտներին և կանաչներին զինելով պաշտպանել մայրաքաղաքը: Բայց երբ զօրքը ընթացաւ դէպի մայրաքաղաքը, այդտեղ էլ ծագեց յեղափոխութիւն: Կայսրը զուխ կորցրած, ամեն ինչ կորած համարեց և իւր ընտանիքի հետ փախաւ ասիական ամիր:

602 թ. նոյեմբերին Փոկասը կայսր օծուեց (602—610) և իւր հաստատուելուց անմիջապէս յետոյ հրամայեց զխառնել կայսեր և նրա որդիներին: Բազմաթիւ մահուան վճիռներ արձակեց, որպէս զի զբանով հաստատուէր բռնակալի իշխանութիւնը: Պատմադրութիւնը, որ կայսեր յետագոյ հակառակորդների բացարձակ կողմնակից է, նրան ներկայացրել է ամենասե զոյներով: Բայց նա զբանով ճշմարտութիւնն է պահպանել: Արեւելահռովմում զբանից աւելի վայրենարարոյ և անընդունակ իշխանութիւն երբեք զոյութիւն չէ ունեցել:

Խոսքովը դահակալութեան փոփոխութիւնից իսկոյն օգտուեց, և սկսեց թշնամութիւնները իւր «հայր» Մաւրիկիոսի վրէժը առնելու պատրուակաւ: Մարտէսը արեւելքի ամենաընդունակ զօրապետը, Պարսիկների սարսափը, Եգիպտոսում ապստամբուեց և փորձեց միանալ Խոսքովի հետ: Փոկասը որպէսզի կարողանայ իւր բոլոր ոյժը զործ դնել արեւելքում տարեկան հարկը մեծացնելով, Ավարների հետ խաղաղութիւն հաստատեց: Մարտէսը հաւատալով կայսեր եղբորորդի Դոմենաիւլոս զօրապետի խօսքին, անձնատուր եղաւ և Փոկասի ձեռքով սպանուեց խորհախ կերպով: Պարսիկները մի շարք յաղթութիւններ տարան: 606 թ. ընկաւ սահմանի ամենագլխաւոր ամրութիւնը՝ Դարան, Ասորիքը և Միջագետքը յեղիզու եցին նոցա այրուձիով: 608 թ. Փոքր Ասիայի վրայով հասան մինչև Բաղկե-

դոն: Մայրաքաղաքի մէջ պաշտօնականները և ազնուականները խիստ թշնամարար էին արքայամարտում դէպի պետր: Միայն արիւնակից սարսափներով էր Փոկասը կարողանում պաշտպանել իւր իշխանութիւնը: Բայց չափազանց ընդունակ Պրիսկոս զօրապետը՝ որին Փոկասը փեսայացրել էր և կանանցի հրամանատար կարգել, միացաւ Ափրիկայի Հերակլէոս եպարքոսի և նրա եղբայր Գրիգորի հետ: Սոքա բաւական ժամանակ էր զինուած էին: Նիկիտասը՝ Գրիգորի որդին ցամաքային ծանապարհով արշաւեց Եգիպտոսի վրայ և սաւառիկ կռուից յետոյ՝ անկեց Աղէքսանդրիային, մինչդեռ Հերակլէոսը, էքսարխի որդին անփրկեան նաւատորմով ուղղակի նաւեց մայրաքաղաքի դէմ: Եւ նա, առանց ծանապարհին որ և է լուրջ ընդդիմութեան պատահելու, Հոկտեմբերին 610 թ. հասաւ Բիւզանդիոնի նաւահանգիստը: Փոկասը զոհ գնաց ժողովրդեան կատաղութեան սարսափելի կերպով, նրա հետ միասին ընկան նրա զեկավարները՝ Դոմենտիոսը, Բոնոգոսը և Լեոնտիոսը, Հոկտեմբերի 5-ն Հերակլէոսին (Հերակլ) ժողովուրդը և սենատը հանդիսաւոր կերպով հռչակեցին Ազոտոս և օծեց Սերգիոս պատրիարքը:

Հերակլից սկսած կարող ենք պատմութեան մէջ նոր հատուած որոշել, նրա կառավարութիւնը միաժամանակ սահմանաքար է արդէն մեռնող ժամանակաշրջանի և սկիզբն է միանգամայն մի նոր դարաղլխի: Դասական — հելլենական քաղաքակրթութիւնը, որ իւր կենսունակութիւնը արտայայտեց մանաւանդ պատմագրութեան մէջ (Պրիսկոս — Մալքոս — Պրոկոպիոս — Ագաթիոս — Մենագրոս), իւր վերջի շառաւիղը ունեցաւ Թէոփիլակտոս Սիմոկատէսին: Սերգիոս հանձարեղ պատրիարքի ձեռնադրման, որ հովանաւորում էր զիտութիւնները: Յետոյ շուտով սկսում է համարեա կատարեալ բարբարոսութեան շրջանը, որ տևում է դարուկէս: Արեւելքի դէմ մղւած զոյուլեան սոսկալի պատերազմը, որ արունակուեց բոլոր այդ դարաշրջանում լընեցրեց թէ օրէնքները և թէ մուսաներին: Երգարե միայն իմաստականները կարող են արքայամարտում խօսել և մտածել այդ զրակաւութիւնից զուրկ դարաշրջանի մասին. բայց

այդ ժամանակը հիմնովին կործանուեց հին յունական փառահեղութիւնը: Այդտեղից իսկապէս կարող ենք դարաշրջանի դարձը գնել, մենք թողնում ենք հին դասական դարը և ոտք ենք գնում միջին դարու շէմքի վրայ:

Մետրոպ Վարդապետ.
(Եր շարունակութիւն).



ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԷ ԻՆՉՊԷՅ ՊԷՏԲ Է ՈՒՍՈՒՄԸ ԼԵՏԱՔԵՐԵԱՆ
ԿԱՆ ԵՆԵԼ.

Պրիկայումս ընդհանուր կանոն է թէ յաջող կարող է լինել միմիայն այն ուսուցումը, որ հետաքրքրում է մանուկներին. թէ պէտք է, որ երեխաները առանձին սիրով և յօժարութեամբ ուսանեն, այս բանին դժուար թէ որ և է մէկը հակառակ լինի: Այս գաղափարը վաղուց է մուտք գործել մանկավարժական շրջանում և այնքան արմատացել է, որ ընդհանրացած բան է դարձել: Այս հիման վերայ պէտք էր ընդունել, որ կրթութեան մէջ եղած «հետաքրքրութեան» վերաբերեալ հարցերը, եթէ ոչ գործնական կիրառութեանց շրջանում, գտնէ ուսուցիչների զիտակցութեան մէջ կատարելապէս և բազմակողմանի կերպով պարզարանուած պիտի լինէին: Մինչդեռ բաւական է միայն փորձել «հետաքրքրական» անորոշ բառի իմաստը փոքր ինչ պարզելու և աւելի մօտիկ սահմանելու այն պայմաններն, որոնք անհրաժեշտ են ուսուցման այդ պահանջին բաւարարութիւն տալու, որ անմիջապէս թիւրիմացութիւններ յառաջ դնեն ապա և տարաձայնութիւններ:

Եթէ երեխաների ուսման մէջ ցոյց տուած հետաքրքրութեան միակ նշան համարենք, նուցա սիրով, օրինակելի և ուշադիր վերաբերմունքը դէպի դասը, այն ժամանակ «հետաքրքրական» պէտք է ընդունել մի պորտպմունք,